ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» մարտի 2012 թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերի (տարածքների), այդ թվում՝ միասնական ընդունարանների տեղակայման վայրերին և պայմաններին հավանություն տալու մասին» հ.29 արձանագրային որոշման 3-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնների և միասնական ընդունարանների տեղակայման նպատակով Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը (ոչ բնակելի տարածքները) անհատույց օգտագործման իրավունքով անորոշ ժամկետով (անժամկետ) տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմին՝ համաձայն հավելվածի։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«___» մարտի 2012թ.
N_____-Ա որոշման

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆԵՐԻ
ՑԱՆԿ

Հ/Հ	Ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոններ /այդ թվում՝ միասնական ընդունարաններ/	Տեղակայման վայրը
Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջան		
1.	ՍԾՏԲ /ընդունարան	Նորքի այգիներ հ.225, «Թիվ 121 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջան		
2.	ՍԾՏԲ	Դավթաշեն 3-րդ թաղամաս, վարչական շենք
3.	ԶՏԿ	
4.	ՍԱՊԾ	
5.	Ընդունարան	
Երևան քաղաքի Ավան վարչական շրջան		
6.	ՍԾՏԲ	Խուդյակով հ.222, վարչական շենք
7.	ԶՏԿ	
8.	Ընդունարան	Խուդյակով փողոց, «Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ
Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջան		
9.	ՍԱՊԾ	Սասունցի Դավիթ հ.87ա, վարչական շենք
Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան		
10.	ՍԾՏԲ	Դավիթ Անհաղթ 11, վարչական շենք
11.	Ընդունարան	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս.ՄԱԿԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 28.07.2011թ. հ.29 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերի (տարածքների), այդ թվում՝ միասնական ընդունարանների տեղակայման վայրերին և պայմաններին:

Նշված որոշմամբ առաջարկվել է համայնքների ղեկավարներին ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոնների և միասնական ընդունարանների տեղակայման համար առաջարկված հասցեներում համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինություններում տեղակայված տարածքներից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմին տրամադրել մակերեսներ՝ կնքելով անհատույց օգտագործման պայմանագրեր անորոշ ժամկետով (անժամկետ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 27.01.2012թ. հ.151 գրությամբ ներկայացրել է Երևան քաղաքում կազմակերպվող ինտեգրված սոցիալական ծառայությունների 12 կենտրոններից 5 կենտրոնների և դրանց միասնական ընդունարանների տեղակայման հասցեները, որոնք համապատասխանաբար գտնվում են Երևան քաղաքի Էրեբունի, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Ավան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» N 345-Ն որոշման համաձայն Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրում է Երևան քաղաքի ավագանին, սույն որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ